ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի _____-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N___-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասն ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա անվճար տեղերի ¥պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը ¥առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2022 թվականի_____
ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
_____ _____ 2022 թվականի
N____-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**		
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	10	20
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**		
	✠011401.03.6 Աշխարհագրություն	10	5
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	10	10
	011401.11.6 Կերպարվեստ	10	5
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	10	10
	011401.18.6 Պատմություն	10	10
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	10	30
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	10	15
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	10	20
	✠011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	10	15
	✠011401.25.6 Մաթեմատիկա և ֆիզիկա	10	15
023201.00.6	**Լեզվաբանություն**		
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների) - անգլերեն և հայերեն լեզուներ	10	15

031301.00.6	**Հոգեբանություն**		
	031301.01.6 Հոգեբանություն	10	10
041201.00.6	**Ֆինանսներ**		
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	10	20
041301.00.6	**Կառավարում**		
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	10	15
042101.00.6	**Իրավագիտություն**		
	042101.01.6 Իրավագիտություն	10	20
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	20
	Պահուստային տեղերը	**30**	**30**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**200**	**285**

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**	
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	20
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**	
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	20
	011401.18.6 Պատմություն	20
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	20
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	20
	011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	20
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**	
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	20
042101.00.6	**Իրավագիտություն**	
	042101.01.6 Իրավագիտություն	20
061101.00.6	**Ինֆորմատիկա (*համակարգչային գիտություն)***	
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	20
	Պահուստային տեղերը	**20**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**200**

2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
021201.00.6	**Դիզայն**		
	021201.01.6 Դիզայն	10	10
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	10	10
041801.00.6	**Ագրոբիզնես**		
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	10	10
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	13	10
071403.00.6	**Ռադիոտեխնիկա և կապ**		
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	5	15
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**		
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	10	15
073101.00.6	**Ճարտարապետություն**		
	073101.01.6 Ճարտարապետություն	10	10
073102.00.6	**Քաղաքային տնտեսություն**		
	073102.01.6 Քաղաքային ենթակառուցվածքների կառավարում	10	10
073201.00.6	**Շինարարություն**		
	073201.01.6 Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	5	10
081101.00.6	**Ագրոնոմիա**		
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	10
084101.00.6	**Անասնաբուժություն**		
	084101.01.6 Անասնաբուժություն	10	10
	Պահուստային տեղերը	**10**	**-**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**113**	**120**

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման

		իրավունքներով (վճարովի) տեղերը
041801.00.6	**Ագրոբիզնես**	
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	20
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**	
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	15
071301.00.6	**Էներգետիկա**	
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	15
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**	
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	20
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**	
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	15
073201.00.6	**Շինարարություն**	
	073201.01.6 Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	15
	073201.03.6 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	15
081101.00.6	**Ագրոնոմիա**	
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	15
	Պահուստային տեղերը	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**130**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ

ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը- ԱՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներից:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները- ԱՀ պետական բուհերի մասնագիտությունների ցանկին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի հաստատվում են ըստ մասնագիտությունների անվճար և վճարովի ուսուցման տեղերը: Պետության կողմից սահմանված ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը նախատեսվում են մրցութային քննական առարկաներից առավել բարձր միավորներ ունեցող դիմորդներին փոխատեղման կարգով ընդգրկելու համար, իսկ պահուստային անվճար տեղերում հիմնականում ընդգրկվում են ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալական խմբերի դիմորդները:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը- Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների անվճար և վճարովի տեղերի սահմանում, սոցիալական խմբերի և բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների անվճար հիմունքներով ուսուցման ապահովում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը- Նախագծի ընդունումը նպատակ ունի բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձրագույն կրթական գործունեության լիցենզիաներով սահմանված տեղերի չափաքանակներում հատկացնել անվճար և վճարովի ուսուցման տեղեր՝ ապահովելով միասնական և ներբուհական քննությունների արդյունքներով մրցութային կարգով և ըստ սոցիալական խմբերի մրցույթից դուրս ընդունելության կազմակերպումը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձինք- ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժին, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, պրոռեկտորներ:

6. Ակնկալվող արդյունքը- Նախագծի ընդունումը կնպաստի հանրապետության սոցիալ-տնտեսական ոլորտի և գիտության զարգացման կարիքներին համապատասխան և առաջնային կարևորություն ունեցող մասնագետների պատրաստմանը:

Ա. Հակոբյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերի և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող «Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերի և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՄՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող «Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերի և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը տեղեկատվական միջոցներով ներկայացվել է հանրային քննարկման:

Ա. Հակոբյան

Ֆ Ո Ր Ձ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերի և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Լիցենզավորման և իրավաբանական

բաժնի վարիչ **Ա. Ապրեսյան**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը «Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերի և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Արցախի Հանրապետության կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝ ԱՀ ԿԳՄՄՆ աշխատակազմի ԿԳՎ մասնագիտական կրթության և գիտության բաժին: